

ՊԱՏՄԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԹԵՐ ՎԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Հայոց վանքերի առաջին կաթմակերպութիւնը սկսում է Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից, թէև աւանդութիւնը յիշում է (Ստեփաննոս Օրբելեանն ասում է, որ Թանահատի վանքը հիմնուած է Հայոց թուականից 400 տարի առաջ, այսինքն 112 թուին)։ Ս. Բարթողիմէոս առաքեալի, Հոգեաց, Արտաղի և մի քանի ուրիշ հին վանքերի հիմնադրութեան ժամանակ համարում են Առաջին դար) նաև այնպիսի վանքեր՝ որոնք գոյութիւն ունէին և նրանից առաջ։ Ս. Գրիգոր Լուսաւորչի սահմաններով, Վանքը մի եղբայրութիւն է, իւրաքանչիւր անգամը մի եղբայր է, նրանց միացնող կապը թարոյական է, այսպիսի կապի ներկայացուցիչը եղբայրների համաձայնութեամբ ընտրուած առաջնորդն է, իւրաքանչիւր եղբայր պարտական է անպայման հնադանդունի առաջնորդին, նրա խրատներին ականջ դնել, նրա հրամաններին հպատակուել, ոչ մի գործ առանց առաջնորդի կամքի լինելու չէ։ Նրա կամքից դուրս եկողը պէտք է ապաշխարի, նրան արհամարհողը Աստծուն է արհամարհում, ոչ ոք չպէտք է իր կամքով գործ խնդրի առաջնորդից, այլ ինչ գործ առաջնորդը յանձնելու լինի, այն պէտք է ընդունի անտրտունջ։ Առաջնորդը ինքը պէտք է անհոգ չլինի, ամէն բանի մէջ ճշմարտասէր լինի, եղբայրներին խրատի խորպիտութեամբ։ Ս. Լուսաւորչի սահմանած վանքերի մէջ առաջնորդից բացի կան և ուրիշ պաշտօնատար անձինք, նրանց մէջ առաջինը տնտեսն է։ Լուսաւորչի պատուիրում է տնտեսին չկորցնել, չծախել և դուրս չձգել ու եկեղեցու անօթեղէնը, ինչ որ եղբայրութեան բարձր է, այն պարզին է Աստծոյ»։ Պատուիրում է մատակարարելու ժամանակ պահպանել հաւասարութիւնը, ծեբերին, հիւանդներին, տրկարներին, ճանապարհորդներին, մշակներին, իւրաքանչիւրին արժանի բաժին տալ։ Տնտեսից յետոյ գալիս են շարաթաւորները, որոնք, ինչպէս երևում է, հերթապահ եղբայրներ են, որ վերակացու են նշանակուած կահկարասիքի պահպանութեանը և այլն։

Ս. Լուսաւորչի կողմից հաստատուած այսպիսի կաթմակերպութեան շնորհիւ վանքերն ունեցան կրկնակի նշանակութիւն։ 1) որ նրանց մէջ կաթմակերպուեց նոր հասարակութեան համար կենդանի օրինակ։ Ժողովուրդը ընդօրինակում էր նրանց կարգերը, սովորութիւնները և պաղպաղանքները, որով և հետզհետէ կաղուրդւում էր քրիստոնէական կեանքի մէջ։ 2) նրանք ծաղկեցրեցին իրենց մէջ ուսում, դպրութիւն և հասարակական կրթութիւն։

Առաջին ուխտը, որ Ս. Լուսաւորչի հիմնեց Հայաստանում, Իննական հան վանքն էր, որ յետոյ Գլակայ Ս. Կարապետ կոչուեց, չըջապատուած խիտ և ընդարձակ տնտառներով, բարձր և գերահայեաց բլուրներով, առողջարար

և բարեհամա աղբիւրներով. այդ վանքում շուտով հաւաքուեցին շուրջ 60 ճրգ-
նաւորներ: Ս. Գրիգոր այդ վանքին առաջնորդ նշանակեց մի անապատական,
 որին հրաւիրել էր Կեսարիայից, դիւղեր և մարդիկ նուիրեց վանքը ապահովե-
լու և պաշտպանելու: Իննականեան տեղի նախկին նուիրականութիւնը, քր-
բիտոտեան ճշնաւորների մարտը կենցաղը, Ս. Լուսաւորչի սահմանած նոր
տօները կարճ ժամանակի մէջ կապեցին նորահաւատ ժողովրդի սիրտը այդ
վանքի հետ և բաղմաթիւ ուխտաւորներ համախմբուում էին նրա շուրջը: Աւան-
դութիւնն ասում է, որ մի անգամ, երբ Տրդատ Մեծը իր նախարարներով զա-
լիս է ճշնաւորներից ազօթք և օրհնութիւն հայցելու, Իննականեան վանքում հա-
ւաքուել էին այդ ժամանակ հարիւր հազարից աւելի ուխտաւորներ: Ինչպէս
բոլոր վանքերի համար, այնպէս էլ Իննականեան վանքի համար Ս. Լուսաւորչի
հաստատել էր վանական խոտարարոյ կեանք: Այդ վանքի միաբանները յօժա-
րութեամբ տանջում են իրենց մարմինը, հոգեկան վսեմ բաւականութիւն ձեռք
բերելու համար: Այս երևում է առաւելապէս նրանց կերակրի, զգեստի և քնա-
կաբաւի կազմութիւնից: Այսպէս, խոտակերից վանքի միաբանների սնունդը
միայն վալրի բանջարէն էր, Մարենաց կրօնաւորների զգեստը ուխտի մորթին
էր, Թանահատի կրօնաւորները, որ կոչւում էին ճշնապաշտօնք սահմանա-
ւորք, բաւականանում էին չոր հացով և ջրով, այն էլ ճաշակում էին օրը մի
անգամ՝ երկուները, առանց իրար հետ խօսելու, օր ու գիշեր աղօթքի էին
կանդնած կամ ինչպէս համեմատում է պատմիչը, զանգէլ կանթիղի նման կտիւ
էին, սպասաւորներից զատ ոչ ոք իրաւունք չուներ վանքից դուրս գալու, Կի-
րակի օրերն անգամ բաւականանում էին միայն բանջարեղէնով և ընդեղէնով,
չէին ճաշակում ո՛չ իւղ, ո՛չ պանիր և ո՛չ հասարակ թան, ուստի կոչուեցան
Թանահատք, միմիայն դիտաւոր տօներին նրանք ճաշակում էին ձէթ և փոքր
ինչ զինք: Վանական կանոնների տակ իրենց անձը ճշնող կրօնաւորներն ան-
տարբէր չէին սակայն ուսման և կրթութեան, հասարակութեան, բարոյական օ-
րէտը պահանջում էր նրանց ներկայութիւնը և մասնակցութիւնը այդ աստա-
ւելում: Մենք դիտենք, որ Ս. Սահակ Պարթև ունեցաւ 60 աշակերտներ, ու-
րունք, ինչպէս պատմում է խորհնացին, մայրաքաղաքների անքուն, ժրպօն
կրօնաւորների նման ճշնաբան պահեստ, երկաթապատ և բոկալիւնացք մարդիկ
էին և միշտ իրենց վարդապետի հետ միասին շրջում էին: Ս. Սահակ, ինչպէս
մի անապատական նրանց հետ միասին կատարում էր մշտական աղօթքով եկե-
ղեցու կարգը:

Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատած վանքերը որքան և օգտակար էին,
սակայն լիակատար բաւականութիւն չէին տալիս նորածին քրիստոնեայ Հայ
Եւստին, որովհետև այն կարօտ էր տակաւին գործնական դպրոցների, ուր կա-
րողանար տեսնել քրիստոնէական կեանքի շօշափելի պատկերը, ուսանէր նրա
գործածութեան եղանակը: Ս. Լուսաւորչի թողը՝ Ներսէս Մեծ Պարթևը, եղաւ
այն առաջին անձը, որ Հայ ժողովրդին գործնական վարժարաններ տուեց: Նա
ոչ միայն, ինչպէս վկայում են պատմիչները, հաստատեց Հայաստանի բոլոր
գաւառներում յոմարէն և ասորերէն դպրոցներ, այլև բարեկարգեց Հայոց եր-
կիրը, հիմնելով վանքեր և բարեխիրական հաստատութիւններ: Ներսէս Մեծ
քարոզում էր քրիստոնէական գաղափարախօսութեան հետ միասին ե՛ւ ուսման,
գիտութեան ու լուսաւորութեան գաղափարը: Ներսէս Մեծի հաստատած այս
կարգերից յետոյ, ինչպէս վկայում է խորհնացին, Հայոց երկիրն այլևս չէր
գորպէս բարբարոս այլաւիակեալս, այլ որպէս զբաղաբացիս համեստացեալս:

Ներսէս Մեծի սահմանած ուսումնական բարեկարգութիւնների գաղա-
փարը արժատ ձգեց Հայերիս մէջ. այդ երևում է նրանից, որ հետագայ դարե-

լում ևս զոյութիւն ունէին նմանօրինակ հաստատութիւններ: Այսպէս, մենք գիտենք, որ Զ դարում Սիւնեաց աշխարհի մէջ Արաբքի վրայ շինուեց Գիւտայ վանքը: Որբիւնանի վկայութեամբ այնտեղ էլ հաստատուեց զպրոց: Նոյն Սիւնեաց աշխարհում ժ դարում կառուցուեց Նորափանքը, Որբելեանի վկայութեամբ «Գոթատուն»:

Սակայն Հայոց վանքերի այն բոլոր առաւելութիւնները, որոնց մասին խօսում են մեր բոլոր պատմիչները, բոլորովին նսեմացնում են նրանց գիտաւոր կոչումը, որն է՝ սպասաւորել ժողովրդի կրթութեանը և լուսաւորութեանը: Նրանց գործունէութեանը այսպիսի մի ասպարէզ է ապագայ որոշողն հանդիսացաւ դարձեալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ. նա հաւանեցնում էր թաղաւորին, ասում է Ազաթանդեղոսը, որ զանազան տեղերում մանուկներ ժողովն ուսում տալու համար և թաղաւորն հրաման տուեց Հայոց սոսմանների զանազան դասերից հաւաքել մանուկներին դպրութեան արուեստի համար և նրանց վրայ հաւատարիմ ուսուցիչներ կարգեց, զպրոցների համար հասոյթներ ևս նշանակեց: Բացի դրանից, Ս. Լուսաւորիչ անգաղար գրում էր Կեսարիա և խնդրում, որ դպրութեան համար հմուտ մարդիկ ուղարկեն Հայաստան: Սակայն գրեթէ հարիւր տարի ժամանակ հարկ եղաւ, որ Լուսաւորիչի ֆաներ արդիւնաւոր լինէր եկեղեցու համար և հոնձքին համապատասխան մշակներ հասնէին: Այդ այն ժամանակ, երբ Ներսէս Մեծի քաջած դպրոցներից հանդէս եկան Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի նման մշակներ մտքի և կրթութեան, որոնք Հայոց զրբի գիւտը յաջողացրին, Ս. Գրիգոր Հայացուցին և ուղարկին դպրութեան նոր գլուխ ընծայեցին:

Իսկ երբ Պարսից հայածանքների երեսից Հայոց եկեղեցական դասը բռնութիւնների ենթարկուեց, Հոգևորականութիւնը հարկի տակ դրուեց և արմանաւոր հովիւները տարաշխարհ աքսորուեցին, երբ Ս. Վաղդանանց պատկերազմից յետոյ Հայ ժողովուրդը ևս տարագիր ցրուեց իրեներն ու անապատներ և մի ընդհանուր յուստիարարութիւն թագաւորեց ամէնուրեք, այդ իսկ ժամանակ պարսկական բռնութեան դործած բարոյական աւերակների տակից նորափետուր զարդարուած հանդէս եկաւ Հայոց եկեղեցական ուխտն իր վանքերով, որոնք այնուհետև Հայոց բարոյական պաշտպանութեան համար Լեւոն Պարթև աշխարհի, պարիսպը ընդդէմ թշնամույն և աստեղը լուսատուք յերկրի», ինչպէս նմանեցնում է նրանց իր բանաստեղծական հանճարով Ներսէս Շնորհալին: Այդ նոր վանքերի մէջ ղեկավարութիւնն այլևս Ասորի և Յոյն կրօնաւորների ձեռքը չէր, այստեղ ժողովուրդն էին կեանքի և հալածանքների փորձութեան բովից ելած Հայ կրօնաւորներ, որոնց արտի մէջ վառ և բորբոք էր ազգային եկեղեցու ինքնուրոյնութեան նախանձը: Այստեղ գործում էին այժմ Գիւտի, Յովհան Մանդակունու և Բարկէն Ոթմարեանի նման գիտնական և անկախ հայրապետներ, Եղնիկ Կողբացու, Մովսէս Խորենացու, Եղիշէի և Փարպեցու նման Հոգևորականներ, որոնք մի ձեռքով տարածում էին լուսաւորութիւն և ծաղկեցնում էին հայեցի դպրութիւնը, միւս ձեռքով հեռու էին մղում բարոյական թշնամու զաղտաբողի յարձակումներն ու խլրտումները:

ՎԱՂԱՐԴԱՊԱՍՏԻ ՎԱՐԳԱՊԵՏԱՐԱՆԸ

Անդրանիկ վարժաբանը և գլխաւոր տեղի այդ վանքերի մէջ, անշուշտ, Վաղարշապատի կաթողիկէին է պատկանում: Դեռ Կորիւն Սքանչելին նրա մասին վկայում է, թէ հայտնեղ ինքնաբերաբար գալիս էին շատ ուսումնաստեղ րազմութիւն և թափուում էին աստուածային գիտութեան աղբիւրի վրայ. դի

Արարատեան դաւառի մէջ թագաւորներէի և հայրապետներէի նստալայրում լսեց Հայերի համար շնորհք» :

Վահան Մամիկոնեան ուքիշներէ կարդում կաթողիկէի եկեղեցին էլ նորոպէլ տունց և այնտեղի դպրոցի վերատեսչութիւնը յանձնեց Ղազար Փարպեցուն : Վահանից բացի այդ հաստատութեանն օգնում էին և Կաթարականները «պողոթիք և ամենայն պիտոյիւք» : Երբ Ղազար Փարպեցուն թշնամիները իրրի լոյսի թշնամիներ, վանեցին նրան այս վանքից և յափշտակեցին նրա պրքերի հետ միասին նաև նրա յունարէն գրքերը, դժբախտաբար այնուհետև Հայոց մայր եկեղեցին մնաց դուրկ լուսաւորութիւնից և պահպանուեց այնուհետև իրրե մի նշանաւոր հնութիւն, մինչև Ժէ դարում նորոգուեց վերստին և դաւառ նախկին դիրքը և փառքը Մովսէս Տաթևացի կաթողիկոսի օրօք, ինչպէս պիտի տեսնենք իր տեղում :

ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԴՊՐՈՑԸ

Կաթողիկէ մայր եկեղեցուց յետոյ նշանաւոր էր Իննականեան Ս. Կարապետի վանքը, որի կրօնաւորներէ թիւը Ձ դարում հասնում էր մինչև 400ի : Այդ վանքը կոչւում էր «մեծահռչէս մայրաքաղաք» : այնտեղ ծաղկեց և գիտութիւնը : Ձ դարի առաջին տոմարաւէտ հայր Աթանաս, պատմիչներէ վկայութեամբ, տեղեակ էր բոլոր ազգերի տոմարներին, Իննականեան վանքի կրօնաւորներէց էր, 551 թուականի Դուինի ժողովում կայմեց Հայոց ազգային եկեղեցական տոմարը : Այս վանքի առաջնորդներէց մէկն էր Յովհան եպիսկոպոս Մամիկոնեան՝ Տարօնի պատմիչը : Ս. Կարապետի անունը նուիրական էր ամէն մի Հայի համար, առաւել մեծ ոգևորութիւն էր առաջացնում Տարօնի ժողովրդի և նրա իշխաններէ մէջ : Պատերազմների, վտանգների և ամէն տեսակ զժուարին ժամանակ նրանց բացականչութիւնը Ս. Կարապետի անունն էր : Այդ պատճառով ամէն մի յայթուեթան առաջին նուէրը նրան էին մատուցում և ամէն մի վրէժխնդրութիւն նրա անունով էր լինում :

Սակայն ի՞նչ եղաւ Հայ ժողովրդի սիրելի և պաշտելի սրբալայրը : «Արարատ» ամսալիբր հազարդում է, որ 1915 թուին Թուրք և Գերմանացի բարբարոսները ուժանակներով պայթեցրել են այն և որդ վկայութիւններ հաղորդում են, որ Թուրքերը այդ կարաւոր սրբալայրից քարերն անդամ թափել են սար ու ձոր :

ԱՐԱԿԱՆՈՏՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԻ ՎԱՆՔԻՆ ԿԻՑ ԴՊՐՈՑԸ

Գլխակայ վանքի նման է դարում ծաղկեցին մի քանի այլ վանքեր ևս : Այդ դարում պատմիչները յիշատակում են Արապածոտնի Ս. Աստուածածին վանքի անունը և Գեղարքունիքում Մաքենեաց վանքը որպէս ճշակոյթի վայր : Արապածոտնի Ս. Աստուածածին վանքի դպրոցի ղեկավարն է հանդիսացել Թէոդորոս Քրթենաւորը, որին աշակերտել էին Սահակ Ձորափորեցի, Կոմիտաս Ակեցեցի և Յովհան Ռձնեցի կաթողիկոսները : Այս վանքի տեղի մասին բանասիրութեան մէջ հակասական կարծիքներ գոյութիւն ունեն : Ոմանք համարում են նրա տեղը անյայտութեան մէջ, ոմանք նոյնացնում են Դպրի Ս. Աստուածածնի այսօրուայ վանքի տեղում : Ձորափորեցի և Կոմիտաս կաթողիկոսների գեղիցիկ շարականները, Յովհան Իմաստասէրի ողևից հառերը մեծապէս փայլեցնում են այդ վանքի առաջնորդի համբաւը : Ինչպէս Յովհան Իմաստասէրը վկայում է, Թէոդորոսը ոչ միայն իր գիտցածն էր հաղորդում աշակերտներին, այլ շատ տեղերից ամենալաւ բաներ ծաղկաքաղ անելով, լրացնում էր նը-

բանց ուսման պակասը և իր գիտութիւնը շարունակ կատարելագործում էր։ Այս երևում է եւ Օմենցու, և միւսների ունեցած պատրաստութիւնից։ Պատմարան կաթողիկոսն ասում է. «Հմուտ և տեղեակ էր քերթողական շարադրաց և կրթական վարժից թէոնականաց»։

ՄԱՔՆՆԵԱՅ ՎԱՆՔԻ ԳՊՐՈՑԸ

է դարում Գեղարքունիքում ծաղկում է նաև Մաքենաց մենաստանի գայրոցը։ Այն նշանակալից դեր է կատարել Հայ գայրութեան, մանկավարժութեան, դրութեան արուեստի, եկեղեցական—ծիսական պրակտիկական զարգացման ասպարէզում։ Մաքենաց վանքում իրենց կրթութիւնն են ստացել բազմաթիւ հոգևորականներ, նրանցից ոմանք նոյնիսկ բարձրացել են Հայրապետական դահլիճ։ Այդ գայրոցի ղեկավարն է հանդիսացել Հարանց Հայր Սողոմոնը։ Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին և Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելիանն առանձին ջերմութեամբ և բարձր գնահատանքով են խօսում հարանց Հայր Սողոմոն վարդապետի մանկավարժական գործունէութեան մասին։ Նա իր ժամանակին հանդիսացել է նաև Հայ եկեղեցու խոշորագոյն և հրամուտ աստուածաբանը։ Ը դարից սկսեալ ծաղկում է Մաքենաց վանքի գայրոցը։ Այդ մասին մենք տեղեկանում ենք Սևանի վանքի վանահայր Մաշտոց Սեւանցու (հետագային կաթողիկոս, 897—898) Գէորգ Գ Գառնեցի կաթողիկոսին (877—897) պրած նամակից. «Նորոգէին Հայաստան եկեղեցիքն ըստ բազմաժարդ շինութեան, և պէսպէս ուսման առատութիւնք և արուեստաւորք (քերականք, քերթողք և այլն) և դպրոցք կանգուն էին յաշխարհիս և յոյն բարբառոյն տեղեկագոյնք և զուգաշուրթն նոցին թարգմանք յոլով կային»։ Այսպիսի խոհական և հոգեկան տեսիլք ունեցող ուսուցչապետ հարանց Հայր Սողոմոնը Մաքենաց վանքի գայրոցում դաստիարակում և հասցնում է ընտիր և զարգացած աշակերտներ, որոնցից են Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոսը, Գրիգոր Գուգիկ վարդապետը, Մաշտոց եղիվարդեցի Հայոց կաթողիկոսը, Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին և այլք։ Ուսումնական ծրագրի տեսակէտից սոյն վանքում մեծ կարևորութեամբ դասաւանդում էին եկեղեցու վարդապետութիւնը և Հայ եկեղեցու զաւանսարանութիւնը։ Մաքենաց վանքի մեծագոյն ուսումնասիրութեան նիւթը Ս. Գիրքն էր։

ՇԻՐԱԿԻ ԳՊՐԵՎԱՆՔԸ

Մի նշանաւոր կենտրոն էր և Շիրակայ գայրվանքը, որի առաջնորդն էր գիտնական Բարսեղ Ջոն վարդապետը։ Սա, ինչպէս յայտնի է, դրեց Ս. Մարկոսի Աւետարանի մեկնութիւնը և իր ժամանակի իմաստուն մարդկանցից մէկն էր։ Գանձակեցու վկայութեամբ նա բնութեց և խմբագրեց շարականների ժողովածուն, որ Հայ եկեղեցիներում քնդունուեց և կրօնից Ջոնրտիր։ Այս անուանի վարդապետը Շիրակայ գայրվանքում դասախօսութիւններ էր կարդում իր աշակերտների համար։ Այս գայրոցը անչքանում է հետագայ դարերում, բայց մինչև ԺԱ դարը ես անընդհատ ծաղկում է այս գայրվանքը և Սիւնեաց գայրոցների համահասարակ համբաւ է վայելում Հայրութեան մէջ։

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵՈՒՆ

(Շար. 1)